# Հիմնական Տեղեկություններ Herbalife-ի Անկախ Գործընկերոջ Կարգավիճակի Մասին

## Ինչպե՞ս դառնալ Անկախ Գործընկեր:

Անկախ գործընկեր դառնալու համար միայն անհրաժեշտ է ձեռք բերել Անկախ Գործընկերոջ Փաթեթը, որը կազմում է 17,968 դրամ: Լրացուցիչ պարտադիր գնումների կարիք չկա:

Որպես Herbalife-ի Անկախ Գործընկեր, Դուք կարող եք՝

- Ձեռք բերել Herbalife® արտադրանքը զեղչով անձնական կամ ընտանեկան սպառման համար:
- Վաճառել Herbalife® արտադրանքը հաճախորդներին՝ մանրածախ եկամուտ ստանալու համար: Աջ կողմում ներկայացված է օրինակ:

| | |
|---|---|
| Առաջարկվող մանրածախ գինը | 11,251.00 դրամ |
| Անկախ Գործընկերոջ համար վաճառքի գինը *(նախնական զեղչով՝ առանց առաքման ծախսերի և հարկերի)* | - 8,689.25 դրամ |
| **Հնարավոր եկամուտ** | **2,561.75 դրամ** |

- Ներգրավել նոր Անկախ Գործընկերների, ովքեր ցանկանում են գնել Herbalife® արտադրանքը անձնական սպառման կամ հաճախորդներին վաճառելու համար՝ ստանալով վաճառքի փոխհատուցում Herbalife-ից իրենց կատարողականի հիման վրա:
- Դուք **չեք կարող** եկամուտ ստանալ բացառապես նոր Անկախ Գործընկերներ հավաքագրելով և հովանավորելով:

2022 թվականին շատ Անկախ Գործընկերներ ստացան օգուտ միայն Herbalife®-ի զեղչված ապրանքներ գնելուց՝ անձնական սպառման կամ մանրածախ վաճառքի համար: Արդյունքում, տիպիկ Անկախ Գործընկերը չի ստացել որևէ փոխհատուցում Herbalife-ից այլ Անկախ Գործընկերներին արտադրանք վաճառելու համար:

## Տիպիկ ամսում ինչքա՞ն շահույթ կարող է աշխատել Անկախ Գործընկերը:

2022 թվականին առնվազն 1 տարի այս կարգավիճակը ունեցող Անկախ Գործընկերների թիվը կազմել է 1,986,217 մարդ: Տիպիկ ամսում 388,518 Անկախ Գործընկերներ ստացել են վաճառքի փոխհատուցում Herbalife-ից և սովորաբար վաստակել են շահույթ տարվա 9 ամիսներին: Ստորև բերված են Անկախ Գործընկերների եկամուտները տիպիկ ամսում, ոչ ներառյալ ավելորդ ծախսերը, և ներառյալ Herbalife-ի կողմից վճարված վճարները և մանրածախ եկամուտները, որը մոդելավորվել է ԱՄՆ-ում վաճառքի փաստացի տվյալների հիման վրա՝

| |
|---|
| **50%-ն ամսական վաստակել է ավելի քան 63,662 դրամ** |
| **TOP 10%-ը ամսական վաստակել է ավելի քան 590,245 դրամ** |
| **TOP 1%-ն* ամսական վաստակել է ավելի քան 4,533,534 դրամ** |

Բիզնեսի եկամուտը երաշխավորված չէ: Որոշ Անկախ Գործընկերներ հաջողակ են, իսկ ոմանք՝ ոչ: Ինչպես ցանկացած այլ բիզնես, հաջողությունը պահանջում է նվիրվածություն, քրտնաջան աշխատանք և հմտություն:

*2022 թվականին Herbalife-ի հետ բիզնես վարելու ժամանակահատվածը Անկախ գործընկերների TOP 1%-ի համար տատանվում էր 5-ից 10 տարվա միջև:

## Ի՞նչ անել, եթե Herbalife-ի հետ բիզնեսն ինձ հարմար չէ:

- Դուք կարող եք ցանկացած ժամանակ խզել Ձեր Պայմանագիրը Herbalife-ի հետ: Եթե Դուք դադարեցնեք Պայմանագիրը կնքումից 90 օր հետո ընկած ժամանակահատվածում, Դուք կարող եք ստանալ Herbalife Անկախ Գործընկերոջ Փաթեթի արժեքի ամբողջական փոխհատուցում:
- Եթե Դուք դադարեցնեք Պայմանագիրը, Դուք կարող եք վերադարձնել վերջին տարվա ընթացքում Ձեր կողմից գնված ապրանքները, որոնք գտնվում են վաճառքի վիճակում՝ արժեքի ամբողջական փոխհատուցում ստանալու համար: Ընկերությունը վճարում է նաև առաքման համար:
- Հավելյալ տեղեկությունների համար կարող եք զանգահարել +37410320265 հեռախոսահամարով:

## 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՆԿԱԽ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՏԻՊԻԿ ԵԿԱՄՈՒՏԻ ՄԱՍԻՆ

Գները ճիշտ են հրապարակման պահին և ենթակա են փոփոխման:

Armenia - Published: 05-Oct-2023

Herbalife